ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 77

«27» 12 2019 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԴԱՏԱԽԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 45 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի՝ «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» N 1225-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2011 թվականի մայիսի 2-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում վիճակագրության վարման էլեկտրոնային (համակարգչային) կառավարման համակարգի (ծրագրի) կազմման ու ներդրման տեխնիկական բնութագիրը և վիճակագրության չափորոշիչները սահմանելու մասին» N 20 հրամանը, Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության վարման, հաշվետվության ձևի լրացման ու ներկայացման կարգը սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության վարման կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 15-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի հուլիսի 14-ի N 56 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ